

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Արմեն Զանազյանի

Ես՝ Արմեն Զանազյանս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2022 թվականի փետրվարի 03-ին կնքված N 5 պայմանագրի համաձայն:

2022 թվականի փետրվարի 4-ից մինչև օգոստոսի 4-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության 2022թ. ծրագրով նշանակված ստուգումների կատարման աշխատանքները:


Մասնավորապես.

- ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի մարտի 10-ի թիվ 8-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2022 թվականի աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2022 թվականի մարտի 17-ին և ավարտվել հուլիսի 22-ին:
- ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի հունիսի 14-ի թիվ 24-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2022 թվականի աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2022 թվականի հունիսի 20-ին և դեռևս ընթացքում են:

2. Մասնակցել եմ ստուգումների արդյունքներով ստուգման ակտերի, զեկուցագրերի, գրությունների, տեղեկանքների կազմման աշխատանքներին և համապատասխանաբար առաջարկություններ ներկայացրել ստուգվող կազմակերպություններում արձանագրված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:

3. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության
վարչության փորձագետ



Արմեն Զանազյան